Արձանագրություն N 1

Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիայի
2018 թվականի փետրվարի 9-ի նիստի

Նախագահում էր՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը:

Մասնակցում էին
կոլեգիայի անդամներ՝ Արմեն Հարությունյանը, Հ.Ասլանյանը, Դ.Մելքոնյանը, Վ.Հարությունյանը, Վ.Մուրադյանը, Արտակ Հարությունյանը, Ա.Մարուխյանը, Գ.Բաղդասարյանը, Վ.Ռաֆայելյանը, Գ.Պողոսյանը, Ե.Ավագյանը, Ր.Ասլանյանը:

Ներկա էին՝ ՀՀ դատախազության ավագ դատախազ Կ.Կարապետյանը, ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Սիմոնյանը, ՀՀ գլխավոր դատախազության ԱԱ մարմիններում քննվող, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետ Ա.Փանոսյանը, ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների պետերի տեղակալները, ավագ դատախազներն ու դատախազները, ՀՀ զինվորական դատախազի տեղակալները, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության ավագ դատախազը, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերը, ավագ դատախազներն ու դատախազները, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների, մարզերի և կայազորների զինվորական դատախազները, դատախազների տեղակալները, Երևան քաղաքի ու վարչական շրջանների դատախազությունների ավագ դատախազներն ու դատախազները, ՀՀ գլխավոր դատախազի խորհրդականներն ու օգնականները:

Հրավիրվել և կոլեգիայի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԱ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ.Պողոսյանը, ՀՀ ԿԱ ՊԵԿ քննչական վարչության պետ Մ.Դուրյանը, ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչության պետ Մ.Համբարձումյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հայաստանի Հանրապետության դատախազության 2017թ. աշխատանքի արդյունքների ամփոփումը:

Զեկուցողներ՝
ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներ՝ Ա.Հարությունյան, Դ.Մելքոնյան, Հ.Ասլանյան:

2. Դատախազների երդման արարողությունը:

Ներկայացնող՝

ՀՀ դատախազության աշխատակազմի անձնակազմի կառավարման բաժնի պետ՝ Ս.Պարսամյան:

1. Լսեցին՝ Ա.Հարությունյանին, Դ.Մելքոնյանին և Հ.Ասլանյանին:

Արտահայտվեցին՝ ՀՀ գլխավոր դատախազ Ա.Դավթյանը, ՀՀ ԿԱ ոստիկանության պետի առաջին տեղակալ Հ.Պողոսյանը:

Լսելով և քննարկելով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներ Ա.Հարությունյանի, Դ.Մելքոնյանի և Հ.Ասլանյանի զեկուցումները Հայաստանի Հանրապետության դատախազության 2017 թվականի աշխատանքի արդյունքների մասին՝ Հայաստանի Հանրապետության դատախազության կոլեգիան նշում է, որ համակարգի մարմինները, իրականացնելով ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով իրենց վերապահված լիազորությունները, ղեկավարվելով ՀՀ գործող օրենսդրությամբ, ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով, զգալի աշխատանք են կատարել հանրապետությունում օրինականությունը պահպանելու և հանցավորության դեմ համակարգված ու արդյունավետ պայքար կազմակերպելու, քննության որակը բարելավելու, հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության և պատժի անխուսափելիությունն ապահովելու ուղղությամբ:

Այսպես.

2017թ. Հայաստանի Հանրապետությունում գրանցվել է հանցագործության 20.285 դեպք, նախորդ տարվա 18.764 դեպքի դիմաց: Բացահայտումը կազմել է 83.3%, նախորդ տարվա 78.5%-ի դիմաց, այսինքն՝ բացահայտումն աճել է 4.8%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում հանցավորության շարժընթացի վերլուծությունը վկայում է, որ թեև ընդհանուր հանցավորության քանակական ցուցանիշն աճել է, սակայն առանձին հանցատեսակներով, հատկապես ծանր և առանձնապես ծանր հանցագործություններով, արձանագրվել է հանցավորության մակարդակի էական նվազում: Այսպես.

Նախորդ տարվա 18.764-ի համեմատությամբ հանցագործության դեպքերն աճել են 1521-ով կամ 8.1 %-ով: Դրան զուգահեռ՝ 2016 թվականի համեմատությամբ 2017 թվականին առանձնապես ծանր հանցագործության դեպքերը նվազել են 33-ով կամ 16.7 %-ով /198-165/, ծանր հանցագործության դեպքերը նվազել են 352-ով կամ 11.4 %-ով /3081-2729/: Մինչդեռ, միջին ծանրության հանցագործություններն աճել են 284-ով /4728-5012/ կամ 6%-ով, իսկ ոչ մեծ ծանրության հանցագործությունները՝ 1622-ով /10757-12379/ կամ 15%-ով:

Այսինքն՝ հանցագործության դեպքերի աճը տեղի է ունեցել հիմնականում ոչ մեծ և որոշ չափով միջին ծանրության հանցագործությունների դեպքերի հաշվին:

Կոլեգիան փաստում է, որ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների կազմում էական նվազում է արձանագրվել հատկապես հանրային մեծ վտանգավորություն ունեցող հանցատեսակներով, ինչպիսիք են՝ սպանությունը, սպանության փորձը, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելը, ավազակությունը, բնակարանային գողությունը:

Առանձնապես ծանր հանցագործություններից հատկանշական է սպանությունների թվի նվազումը 17-ով կամ 25.8%-ով՝ 2017թ. արձանագրվել է սպանության 49 դեպք՝ 2016թ. 66-ի դիմաց:

Սպանության փորձի դեպքերը նվազել են 13-ով կամ 36%-ով /36-23/, առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու դեպքերը՝ 6-ով կամ 3%-ով /200-194/, ավազակության դեպքերը՝ 7-ով կամ 13%-ով /53-46/, բնակարանային գողության դեպքերը՝ 361-ով կամ 28.9%-ով /1250-889/:

Կոլեգիան փաստում է, որ հանցագործությունների ընդհանուր թվի աճն առավելապես պայմանավորված է լատենտայնության բարձր աստիճան ունեցող հանցագործությունների բացահայտման, գրանցման և հաշվառման աշխատանքների բարելավմամբ, ոստիկանության համապատասխան ծառայությունների հետևողականությամբ, ինչպես նաև կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների, այլ դեպքերի վերաբերյալ հաղորդումների ընդունման, գրանցման և լուծման մասին օրենքի պահանջների նկատմամբ դատախազական պատշաճ հսկողությամբ:

Նշվածի մասին է խոսում մասնավորապես այն, որ 2016 թվականի համեմատությամբ, հաշվետու ժամանակահատվածում էականորեն աճել է լատենտայնության բարձր աստիճան ունեցող այնպիսի հանցատեսակների թիվը, ինչպիսիք են՝ կոռուպցիոն, թմրամիջոցների, հրազենի, ռազմամթերքի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները:

Հատկանշական է, որ 2017թ. էական աճել են կոռուպցիոն հանցագործությունների դեպքերը: Դրանց հայտնաբերումը, բացահայտումը, ինչպես նաև պաշտոնատար անձանց մեղավորության հիմնավորումը, հաճախ մեծ բարդություն են ներկայացնում և պահանջում են քրեական հետապնդման մարմինների կողմից հետևողական, արդյունավետ և համագործակցված գործողությունների իրականացում:

Նշվածով պայմանավորված՝ այս հանցատեսակների թվի աճը պետք է դրական գնահատել: Արձանագրված դինամիկան խոսում է ոչ թե իրականում այդ հանցանքների ծավալների ընդլայնման, այլ դրանց դեմ տարվող՝ հատկապես քրեահրավական պայքարի արդյունավետության բարձրացման մասին:

2017թ. ընթացքում միայն կաշառք ստանալու, կաշառք տալու և կաշառքի միջնորդության 163 դեպք է արձանագրվել, որը նախորդ տարվանից (2016թ.՝ 71) 92-ով կամ 130%-ով ավելի է:

Հաշվետու ժամանակահատվածում աճել են նաև պաշտոնական դիրքի չարաշահման, պաշտոնեական լիազորությունները սահմանազանցելու դեպքերը: 2017թ. ընթացքում արձանագրվել է այս բնույթի 150 դեպք՝ 14-ով կամ 10%-ով ավելի, քան 2016թ.:

Կոլեգիան փաստում է, որ տեսանելիորեն փոխվել է նաև քրեական հետապնդման ենթարկված սուբյեկտների կազմը, մասնավորապես՝ 2017թ. ընթացքում կաշառք ստանալու համար քրեական հետապնդում է իրականացվել դատարանի նախագահի, 2 դատավորի, դատախազի, 2 քննիչի, ՊԵԿ մաքսակետի պետի, տարածքային բաժնի 2 տեսուչի, ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության հարցերի նախարարության ԲՍՓՀ գործակալության պետի, ՔԿՀ պետի և 2 պաշտոնատար անձանց, ՀՀ ոստիկանության ՃՈ ծառայության 4 տեսուչի, ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի «Զվարթնոց» ՍՎԲ հերթափոխի 2 պետի նկատմամբ:

Առևտրային կաշառքի, առևտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելու առերևույթ դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերով քրեական հետապնդում է իրականացվել 5 ԲՈՒՀ-ի ռեկտորի, բանկի վարչության 1 նախագահի նկատմամբ:

2017թ. աճել են անձնական ունեցվածքի գողության (բացի բնակարանայինից, 293-ով կամ 4,9%-ով), խարդախության (94-ով կամ 9,8%-ով), յուրացման (42-ով կամ 20,7%-ով)

դեպքերը: Խուլիգանության դեպքերն աճել են 7-ով կամ 3.6%-ով /202-195/, իսկ բացահայտման ցուցանիշը կազմել է 89.6%:

Ճանապարհատրանսպորտային հանցագործությունների թիվն աճել է 272-ով կամ 38.9%-ով: Միաժամանակ, գրեթե նույնն է մնացել մահվան ելքով ավտովթարների դեպքերի թիվը՝ (2016թ. արձանագրվել է մահվան ելքով ավտովթարի 175 դեպք, որոնցից բացահայտվել է 172-ը կամ 98.2%-ը, 2017թ. արձանագրվել է 176 դեպք, որոնցից բացահայտվել է 173-ը կամ 98,2%-ը):

2017թ. արձանագրվել է անչափահասների կողմից կատարված հանցագործության 403 դեպք՝ նախորդ տարվա 375-ի դիմաց, այսինքն՝ անչափահասների կողմից կամ նրանց մասնակցությամբ կատարված հանցագործությունների դեպքերը 2017թ. ավելացել են 28-ով կամ 7.5%-ով:

Հանցագործությունների դեպքերի աճին զուգընթաց 2017թ. 4.8%-ով աճել է նաև դրանց բացահայտման ցուցանիշը՝ կազմելով 83.3%՝ նախորդ տարվա 78.5%-ի դիմաց: 2017թ. գրանցված հանցագործություններից չի բացահայտվել 3.390-ը կամ 16.7%-ը: ծանր Հանցագործության 2.729 դեպքից բացահայտվել է 1.638-ը կամ 60%-ը (2016թ.՝ 54.2%), միջին ծանրության 5.012 հանցագործությունից՝ 3.552-ը կամ 70.9 %-ը (2016թ.՝ 66.6%): 4.5 %-ով նվազել է առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտման ցուցանիշը՝ արձանագրված 165 հանցագործությունից բացահայտվել է 136-ը կամ 82.4%-ը (2016թ.՝ 198-ից 172-ը կամ 86.9 %-ը):

2017թ. բացահայտվել է նախորդ տարիներին կատարված հանցագործությունների 317 դեպք (2016թ.՝ 224):

2017թ. հանցանք կատարած անձանցից 470-ը եղել է նախկինում հանցանք կատարած (2016թ. համեմատ թիվն ավելացել է 69-ով կամ 14. 6%-ով):

2017թ. հետախուզվել է 15.259 մեղադրյալ, որոնցից հայտնաբերվել է 1.834-ը կամ 12%-ը:

2016 թվականի համեմատությամբ 2017 թվականին հետախուզվողների թիվն ավելացել է 906-ով կամ 6.3 %-ով: Հետախուզվողների հայտնաբերման քանակական ցուցանիշը բարելավվել է 179-ով, իսկ տոկոսայինը՝ 0,5-ով:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության ոլորտ.

2017թ. ընթացքում դատախազական հսկողություն է իրականացվել 40.727 ավարտված նյութի նախապատրաստման նկատմամբ (2016թ.՝ 39.135): Դատախազական հսկողության առարկա կազմող նյութերի թիվը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 1.592-ով, ինչը կարելի է պայմանավորել և՛ 2017թ. հանրապետությունում արձանագրված հանցագործության դեպքերի թվի աճով, և՛ դեպքերի ստուգումը հանցագործությունների ու պատահարների մասին ստուգման կարիք ունեցող տեղեկությունների, ահազանգերի գրանցման թիվ 2 մատյանում անհարկի չգրանցելու, ինչպես նաև հանցագործության դեպքերն առհասարակ գրանցելու հարցում դատախազության կողմից դրսևորած հետևողականությամբ:

2017թ. նախապատրաստված 40.727 ավարտված նյութերից 27.759-ով կամ 68.1%-ով կայացվել է որոշում՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին, որոնցից արդարացման հիմքով՝ 20.785, ոչ արդարացման հիմքով՝ 6.974:

2017թ. նախապատրաստված 40.727 նյութից 11.794-ով կամ 28.9 %-ով հարուցվել է քրեական գործ, որոնցից 286-ը կամ 2.4%-ը՝ նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման արդյունքում: Նշված 286 քրեական գործից 31-ը հարուցվել է

ՀՀ գլխավոր դատախազի, 27-ը՝ անմիջական վերադաս դատախազի, 228-ը՝ հսկող դատախազների կողմից:

2017թ. դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն է իրականացվել 17.773 քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ, որոնցից 4.356-ով վարույթը կարճվել է՝ 2.430-ը արդարացման, 1.926-ը՝ ոչ արդարացման հիմքով:

2686 քրեական գործ՝ 3447 անձի վերաբերյալ, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, 59 քրեական գործ 61 անձի վերաբերյալ դատարան է ուղարկվել բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու միջնորդությամբ: 5635 քրեական գործով վարույթները կասեցվել են, 2388 քրեական գործ փոխանցվել է հաջորդ տարի:

2017թ. ընթացքում վերացվել է քրեական գործով վարույթը կարճելու մասին 271 որոշում (2016թ.՝ 378), որոնցից 27-ը՝ ՀՀ գլխավոր դատախազի կողմից (2016թ.՝ 46): Հսկող դատախազների կողմից վերացվել է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին 209 որոշում (2016թ.՝ 324): 67 քրեական գործ վերադարձվել է քննիչներին՝ լրացուցիչ քննություն կատարելու կամ մեղադրական եզրակացությունը վերակազմելու համար /2016թ.՝ 70/:

2017թ. ընթացքում ձերբակալվել է 697 անձ, դատախազի կողմից ձերբակալումից ազատվել է 8 անձ, ձերբակալման իրավաչափությունը դատական կարգով վիճարկվել է 31 դեպքով, որոնցից 17-ը դատարանի կողմից մերժվել է, 14-ը՝ բավարարվել: Դրանցից 10-ի դեմ բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնք մերժվել են: Վճռաբեկ բողոքներ չեն բերվել:

Նման իրավիճակից խուսափելու համար անհրաժեշտ է, վարույթն իրականացնող մարմնից բանավոր կամ գրավոր հաղորդում ստանալուց հետո, յուրաքանչյուր դեպքում անհապաղ ստուգել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված հիմքերի առկայությունը և կիրառել դատախազական ներգործության համապատասխան միջոցներ:

Հաշվետու ժամանակահատվածում դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու մասին 803 միջնորդություն (2016թ.՝ 927), որոնցից բավարարվել է 727-ը (2016թ.՝ 816): 78-ի քննության արդյունքում դատարանի կողմից կիրառվել է գրավ:

Ներկայացված միջնորդությունը մերժելու կամ միջնորդության քննության արդյունքում գրավ կիրառելու մասին դատարանի որոշումների դեմ ներկայացվել է 79 բողոք, որոնցից 25-ը բավարարվել է:

Հաշվետու ժամանակահատվածում դատարան է ներկայացվել մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրված՝ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին 561 միջնորդություն, որոնցից բավարարվել է 529-ը: Կալանավորման ժամկետը երկարացնելու մասին ներկայացված միջնորդությունը մերժելու կամ գրավ կիրառելու մասին դատարանի որոշումների դեմ դատախազի կողմից բերվել է 25 բողոք, որոնցից 13-ը բավարարվել է, 12-ը՝ մերժվել:

2017թ. ընթացքում քրեական գործերով 34 անձ դատախազի որոշմամբ ազատվել է կալանքից՝ կալանքի տակ պահելու նպատակահարմարությունը վերանալու պատճառաբանությամբ:

Վարույթի մասնակիցների կողմից բողոքարկվել է քրեական գործ հարուցելը մերժելու մասին 655 որոշում (2016թ.՝ 1198), որոնցից 51-ը բավարարվել է (2016թ.՝ 74), 604-ը՝ մերժվել (2016թ.՝ 1124), քրեական գործով վարույթը կասեցնելու մասին 32 որոշում (2016թ.՝ 68), որոնք մերժվել են, քրեական գործով վարույթը կարճելու մասին 385 որոշում (2016թ.՝ 885), որոնցից 48-ը բավարարվել է (2016թ.՝ 53), 337-ը՝ մերժվել (2016թ.՝ 832), 2-ի քննությունն ընթացքում է:

ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերվել է 61 վճռաբեկ բողոք, որոնցից 12-ն ընդունվել է վարույթ: Կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը մերժելու մասին որոշումների դեմ բերվել է 3 բողոք, որոնցից 2-ով բողոքը մասնակի բավարարվել է, իսկ 1-ով վարույթ ընդունելը մերժվել է: Կալանավորման այլընտրանքային խափանման միջոց՝ գրավ կիրառելու որոշման դեմ բերվել է 8 բողոք, որոնցից 7-ի վարույթ ընդունելը մերժվել է, 1-ով որոշում դեռ չի կայացվել: Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումները դատարանների կողմից վերացնելու մասին դատական ակտերի դեմ բերվել է 8 վճռաբեկ բողոք, որոնք վարույթ չեն ընդունվել:

Քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումների դեմ բերված բողոքի քննության արդյունքում անձանց իրավունքների և օրինական շահերի խախտում արձանագրած դատական ակտերի դեմ բերվել է 28 վճռաբեկ բողոք, որոնցից 3-ը բավարարվել է, 20-ը վարույթ չի ընդունվել, 3-ի վարույթն ընթացքում է, 2-ով որոշում դեռ չի կայացվել:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության առարկա հանդիսացող այլ դատական ակտերի դեմ բերվել է 4 վճռաբեկ բողոք, որոնցից 3-ը վարույթ չի ընդունվել, 1-ի վարույթն ընթացքում է:

2017թ. ընթացքում համապատասխան իրավաբանական կամ պաշտոնատար անձանց ուղարկվել է 181 (2016թ.՝ 93) միջնորդագիր, որոնցից ստացվել են դրանք քննարկելու և անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ պատասխաններ:

Հաշվետու ժամանակահատվածում դատախազների կողմից քրեական գործով վարույթից հեռացվել է 164 քննիչ, ներկայացվել է ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ 191 միջնորդություն:

Դատարաններում մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման ոլորտ.

2017թ. ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ է ուղարկվել 2686 գործ՝ 3447 անձի վերաբերյալ (2016թ.՝ 2906 գործ՝ 3731 անձի վերաբերյալ):

Դատարաններում քննվել և ավարտվել է 2394 քրեական գործ՝ 2949 անձի վերաբերյալ (2016թ.՝ 2339 քրեական գործ՝ 2905 անձ): Նշված քրեական գործերից 2047-ով դատապարտվել է 2509 անձ (2016թ.՝ 1969 գործով՝ 2464 անձ):

Դատապարտված անձանցից 93-ը եղել են անչափահասներ (2016թ.՝ 77), 233-ը՝ կին (2016թ.՝ 236), 301-ը՝ նախկինում դատված (2016թ.՝ 296), 49-ը՝ օտարերկրացի (2016թ.՝ 51): 18 գործով 24 անչափահասի նկատմամբ դատարանների կողմից կիրառվել են դաստիարակչական բնույթի հարկադրական միջոցներ (2016թ.՝ 22 գործ՝ 28 անչափահաս):

2017թ. ՀՀ դատարանների կողմից կայացվել է լրիվ կամ մասնակի արդարացման 143 դատական ակտ՝ 180 անձի (4.7%) վերաբերյալ, որոնցից 142 (78.9%) անձ ձեռք է բերել լրիվ արդարացվածի, իսկ 38-ը (21.1%)՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ: 2016թ. կայացվել է լրիվ կամ մասնակի արդարացման 160 դատական ակտ՝ 187 անձի (5%) վերաբերյալ, որոնցից 140-ը ձեռք է բերել լրիվ արդարացվածի, իսկ 47-ը՝ մասնակի արդարացվածի կարգավիճակ:

2017թ. կայացված՝ 63 անձի վերաբերյալ 143 լրիվ կամ մասնակի արդարացման դատական ակտերից 47-ը ՝ 2017թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ մտել է օրինական ուժի մեջ:

2017թ. ընթացքում բեկանվել է նույն ժամանակահատվածում կայացված 8 անձի վերաբերյալ 7 գործով արդարացման դատավճիռ և նշված գործերով կայացվել են մեղադրական դատավճիռներ:

Արդարացված 180 անձից 156-ը (86.7%) արդարացվել է ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների կողմից, 23-ը (12.8%) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից, իսկ 1-ը (0.5%)՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի կողմից:

2017թ. արդարացման դատական ակտերի դեմ մեղադրողների կողմից ՀՀ վերաքննիչ քրեական դատարան է բերվել 68 բողոք, որոնցից 30-ը մերժվել է, 5-ը՝ բավարարվել, 33-ը ընթացքում է: Արդարացման դատական ակտերի դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի կողմից բերվել է 21 վճռաբեկ բողոք, որոնցից 14-ով որոշում է կայացվել վարույթ ընդունելը մերժելու մասին, 4-ով վարույթ ընդունելու հարցը լուծված չէ, 3-ով որոշում է կայացվել վարույթ ընդունելու մասին, որոնք ընթացքում են:

2017թ. ավարտված՝ 2949 անձի վերաբերյալ 2394 քրեական գործից 8 անձի վերաբերյալ 4 գործով դատարանում մեղադրողները մասնակի հրաժարվել են մեղադրանքից, և այդ հիմքով դատարանը կայացրել է արդարացման դատավճիռ, որը կազմում է մեղադրվող անձանց 0.2%-ը: 2016 թվականի ընթացքում ավարտված 2339 գործից՝ 2905 անձի վերաբերյալ մեղադրանքից հրաժարվելու հիմքով 12 քրեական գործով արդարացվել է 12 անձ, որը կազմում է մեղադրվող անձանց 0.4%-ը: Այսինքն՝ մեղադրողների կողմից մեղադրանքից հրաժարվելու դեպքերը հաշվետու տարում նվազել են 4-ով կամ 33.3%-ով:

Արդարացման դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ քրեական օրենքի մեկնաբանության և կիրառության խնդիրները թեև քանակապես նվազել են, սակայն ի հայտ են եկել այնպիսիք, որոնք պահանջում են արմատական և սկզբունքային լուծումներ: Դրանցից հիմնականը սուտ մատնության հանցակազմը սահմանող քրեաիրավական նորմերի մեկնաբանության և կիրառության խնդիրն է:

Արդարացման դատավճիռների ուսումնասիրությունը վկայում է, որ հաճախ չեն պահպանվում սուտ մատնության հանցակազմի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Մտահոգիչ է տարածված այն պրակտիկան, երբ հանցագործության մասին հաղորդում ներկայացնելուց հետո անձը հերքում է իր հայտնած տվյալները՝ նշելով, որ ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ: Այդ հանգամանքը մի շարք դեպքերում բավարար է եղել հանցագործության դեպքի բացակայությունը փաստելու և անձին սուտ մատնության մեջ մեղադրելու համար: Քրեական գործերով շատ հաճախ լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն չի կատարվել անձի հայտնած երկու հակառակ տեղեկությունների իսկությունը ճշտելու ուղղությամբ և նրա հայտնած սկզբնական տեղեկությունները պատշաճ քննությամբ հերքված չլինելու պայմաններում անձը մեղադրվել է սուտ մատնություն կատարելու մեջ:

Այս մոտեցումը երբեմն հանգեցնում է նրան, որ սուտ մատնության մեղադրանքի հիմքում դրվում է բացառապես ամբաստանյալի այն ցուցմունքը, որով հերքել է իր հայտնած սկզբնական տեղեկությունները և դատարանում նրա կողմից սկզբնական տեղեկությունները պնդելու դեպքում ակնհայտ է դառնում, որ նրա հաղորդմամբ նշված հանցագործության դեպքը չի հերքվել:

Պրակտիկայի ամենախրթին հարցերից մեկը շարունակում է մնալ խարդախության քրեաիրավական հատկանիշների մեկնաբանությունը՝ դրանց վերաբերյալ դատական պրակտիկայի ոչ միասնականության պատճառով: Պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խարդախության հանցակազմի մեկնաբանության վերաբերյալ Լիա Ավետիսյանի, Վարդան Մաթևոսյանի և Ռուդիկ Բալասանյանի գործերով արտահայտված իրավական դիրքորոշումները միշտ չէ, որ դատարանների կողմից պահպանվել են:

Կոլեգիան փաստում է, որ հաշվետու ժամանակահատվածում կայացված արդարացման դատավճռի բեկանմամբ լուծվել է ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով սահմանված հանցագործության առարկայի մեկնաբանության՝ տևական ժամանակ գոյություն ունեցող խնդիրը:

Այսպես, Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում քննված քրեական գործով մեղադրողի վերաքննիչ բողոքը բավարարելու մասին որոշմամբ վերաքննիչ քրեական դատարանը նշել է, որ փաստաթուղթը կեղծ կարող է լինել ինչպես ձևի, այնպես էլ բովանդակության առումով և փաստաթուղթը կեղծ պետք է համարել նաև այն դեպքում, երբ այն թեև տրված է օրենքով սահմանված կարգով, սակայն հանցավորի կողմից օգտագործվում, ներկայացվում է այնպիսի իրավահարաբերություններում, որոնցում այն օգտագործվել չի կարող, քանի որ այդ իրավահարաբերությանը վերաբերելի չէ, օրինակ՝ օգտագործվում է այլ անձի անձնագիրը՝ վերջինիս հետ արտաքին նմանությունն օգտագործելով:

Կոլեգիան փաստում է, որ լրիվ կամ մասնակի արդարացման դատավճիռների ճնշող մեծամասնությունը կայացվել է հանցագործությանը մեղադրյալի մասնակցությունը կամ հանցակազմի որևէ հատկանիշն արտահայտող հանգամանքը հաստատող ապացույցների անբավարարության, այսինքն՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին անհամապատասխանության հիմքով: Ընդ որում՝ միայն 39 դեպքում գործ ունենք ապացույցների անբավարարության դասական վիճակի, այսինքն՝ դրանց բավարարության վերաբերյալ դատական և մինչդատական գնահատականների ուղղակի տարբերության հետ, իսկ մնացած դեպքերում դրանց համակցության անբավարարությունը կապված է ապացուցողական զանգվածում ներառված որևէ ապացույցի անթույլատրելիության հետ:

Արդարացման դատական ակտերի ուսումնասիրությամբ կարելի է նշել, որ ձեռք բերված ապացույցներին տրված մինչդատական և դատական գնահատականների տարբերությունն ընդունելի է այնքանով, որքանով տեղավորվում է ապացույցների գնահատման և դրա հիման վրա ներքին համոզման՝ օբյեկտիվորեն գոյություն ունեցող սուբյեկտիվ տարրի սահմաններում:

Սակայն բազմաթիվ են դեպքերը, երբ հնարավոր չէ համաձայնել արդարացման դատավճիռներով տրված՝ ամբաստանյալներին առաջադրված մեղադրանքը հիմնավորող ապացույցների անբավարարության մասին դատական գնահատականներին: Դրանցում ակնհայտ դրսևորվում է նախաքննական ցուցմունքների՝ դատարանում տվածների համեմատությամբ նվազ ապացուցողական արժեք ունենալու մասին սխալ մոտեցումը, և դատարանները նույն անձի կողմից նախաքննության ընթացքում տված ցուցմունքի համեմատությամբ նրա փոփոխված դատաքննական ցուցմունքը հիմք ընդունելիս սահմանափակվում են բացառապես փաստելով, որ ավելի արժանահավատ է դատաքննության ընթացքում տված ցուցմունքը: Դատարանները բազմաթիվ դեպքերում անտեսում են դատարանում ապացույցների բովանդակության փոփոխությունների, հաճախ, սուբյեկտիվ, բայց ակնհայտ պատճառները: Արդյունքում՝ դատարանում այլ տեղեկություններ հայտնելու որևէ պատճառ չնշող, ակնհայտ ոչ ողջամիտ պատճառ նշող կամ դեպքից մեկուկես տարի, իսկ երբեմն ավելի անցնելուց հետո միայն, դեպքի մանրամասները, բազմաթիվ անձանց կոնկրետ գործողություններն այլ կերպ ու ավելի մանրամասն հիշող անձի ցուցմունքները դիտվում են ավելի արժանահավատ, քան նախաքննական ցուցմունքները, այն դեպքում, երբ պարզից էլ պարզ են այդ ցուցմունքների փոփոխության առնվազն ոչ դատավարական պատճառները:

Ապացույցներ գնահատելիս դատարանների ցուցաբերած մյուս անընդունելի մոտեցումը մեղադրանքը հիմնավորող ապացույցների նկատմամբ քննադատական

վերաբերմունքի չարաշահումն է: Ապացույցների լրիվ, բազմակողմանի ստուգման պահանջն ամենևին չի ենթադրում, որ ցուցմունքներում ցանկացած հակասություն կարող է հիմք դառնալ դատավճռում փաստելու, որ այն արժանահավատ չէ:

Վերոգրյալի հետ մեկտեղ, կոլեգիան փաստում է, որ առանձին դեպքերում գործով ձեռք բերված ապացույցների համակցության՝ հիմնավոր կասկածից վեր ապացուցողական չափանիշին անհամապատասխանությունը գործի քննության ոչ լրիվության հետևանք է, որի արդյունքում անձին առաջադրված մեղադրանքի փաստական կողմը կազմող առանձին հանգամանքներ չեն հաստատվել:

Քիչ չեն այն դեպքերը, երբ գործի համար կարևոր ապացուցողական նշանակություն ունեցող փաստաթուղթը կցվել է գործին, դրվել մեղադրանքի հիմքում, սակայն այլ փաստաթուղթ ապացույց չի ճանաչվել, ինչպես նաև այն դեպքերը, երբ նախաքննական և դատաքննական ցուցմունքների տարբերությունը հիմնավորելու համար դատավարության մասնակիցը վկայակոչում է պաշտոնատար անձանց կողմից իր նկատմամբ ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն գործադրելու մասին, սակայն մեղադրողն այդ մասին զեկուցագիր չի ներկայացնում և այդ հայտարարությունը հետագայում դրվում է արդարացման դատավճռի հիմքում:

Քրեադատավարական օրենքի նորմերի կիրառման խնդիրների շրջանակում կոլեգիան անդրադարձավ նաև մեղադրանքը հիմնավորող ապացույցների անբավարարության այն դեպքերին, որոնք առաջացել են գործով ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության արդյունքում և, փաստորեն, իրենց հիմքում ունեն քրեադատավարական օրենքի էական խախտման փաստը:

Արդարացման դատավճիռների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դեռևս շարունակում են տարածված մնալ ապացույցի անթույլատրելիության հանգեցնող քրեադատավարական օրենքի այնպիսի խախտումներ, ինչպիսիք են՝ քննչական գործողություններ կատարելիս դատավարության լեզվի սկզբունքի, քննչական գործողությունների կատարմանը ընթերակաների մասնակցության կանոնների, վկայի դատավարական կարգավիճակում՝ առանց մեղադրյալի նվազագույն իրավունքների ապահովման, անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի հարցաքննության դատավարական կարգի խախտումները:

Քրեադատավարական օրենքի խախտումներից հատկապես մտահոգիչ են ամբաստանյալին առաջադրված մեղադրանքի սխալ, ոչ պատշաճ ձևակերպումները: Խնդիրն իր կարևորությամբ առանձնանում է նախ նրանով, որ այդ հարցին բազմիցս անդրադարձ է եղել ինչպես դատախազության կոլեգիայի նիստերում, այնպես էլ օպերատիվ խորհրդակցությունների ժամանակ և կոնկրետ գործերով վերահսկողության շրջանակներում: Բացի դրանից, մտահոգությունն ավելի է խորանում այն պատճառով, որ մեղադրանքը ձևակերպելիս թույլ տրված սխալներն ամբաստանյալի պաշտպանության իրավունքի իրացման, հատկապես դրա որոշակիության խնդիրներ ստեղծելուց զատ, երբեմն, այն դեպքում, երբ չեն ներառում հանցակազմի որևէ պարտադիր հատկանիշ, բավարար հիմք են անձի անմեղությունը հաստատելու համար:

Այս առումով շարունակում են խնդրահարույց մնալ հատկապես ինքնիրավչության և սուտ մատնության վերաբերյալ գործերով մեղադրանքների ձևակերպումները:

Մեղադրանքի ձևակերպման ոչ պակաս խնդրահարույց հարցերից մեկը այլ պետությունից հանձնված անձի մեղադրանքի փոփոխության արդյունքում դրան տրված ձևակերպումն է: Քիչ չեն դեպքերը, երբ մեղադրյալին կոնկրետ մեղադրանքով հանձնելուց հետո, ՀՀ-ում շարունակված նախաքննության արդյունքներով առաջանում է մեղադրանքը վերաձևակերպելու խնդիր: Իրավակիրառ պրակտիկան ձևավորվել և ընթացել է այն

ճանապարհով, որ, միջազգային պայմանագրերին և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին համապատասխան, մեղադրանքը ենթակա է փոփոխման այն դեպքում, երբ դրա իրավաբանական որակումը փոխվում է խստացման առումով:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ հանձնված անձի քրեական հետապնդման սահմանները որոշող կոնվենցիոնար և ներպետական քրեադատավարական նորմերը արգելում են անձին պատասխանատվության ենթարկել այն արարքի համար, որի համար վերջինս չի հանձնվել, գտնում ենք, որ մեղադրանքի բոլոր փոփոխությունները պետք է համաձայնեցվեն մեղադրյալին հանձնող պետության հետ: Բանն այն է, որ հատկապես խարդախությունների վերաբերյալ գործերով, նկատի ունենալով այդ հանցագործության սահմանային բնույթը քաղաքացիաիրավական գործարքի հետ, պայմանավորվող պետությունները կարող են մերժել կոնկրետ ձևակերպմամբ մեղադրանքով անձի հանձնումը՝ այն դիտելով որպես քաղաքացիաիրավական պարտավորության չկատարում: Կամ արարքի իրավաբանական որակումը չփոփոխող այնպիսի վերաշարադրումը, երբ առաջադրված մեղադրանքում հանցագործությամբ պատճառված վնասի չափը նվազեցվում է, խնդրահարույց է այն պատճառով, որ փոփոխված չափով մեղադրանքը հանձնող պետությունում կարող է համարվել նվազ ծանր՝ վաղեմության ժամկետն անցած լինելու կամ համարժեք դատավարական այլ հետևանքներով:

Կոլեգիան փաստում է, որ մեղադրանքի պաշտպանության որակը շատ դեպքերում չի բավարարում անհրաժեշտ պահանջներին, ինչը դրսևորվում է առավելապես մեղադրանքը պաշտպանող դատախազների՝ դատավարական վարքագծի պասսիվությամբ, որի հիմքում այն թյուր մտայնությունն է, թե մեղադրանքի հիմքում դրված ապացույցները բոլոր դեպքերում բավարար են մեղադրանքի հիմնավորվածությունը փաստելու համար: Դրա արդյունքում, հաճախ, դատաքննության ընթացքում կոնկրետ ապացույցները վիճարկող միջնորդություններն արժանանում են դրանք անհիմն լինելու վերաբերյալ պարզ ու վերացական առարկությանը և դրանց կապակցությամբ, նույնիսկ, մեղադրական ճառերում որևէ հիմնավորում չի բերվում: Մեղադրական ճառերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդել նաև, որ դրանց մի մասը չի կարող դատավարական գործողության արտահայտություն համարվել: Դրանք հաճախ չեն անդրադառնում բոլոր այն հարցերին, որոնց կոնկրետ գործով մեղադրանքի պաշտպանության և գործադրված պաշտպանական մարտավարության ուժով պարտադիր է անդրադառնալ: Արդյունքում, մի շարք դեպքերում, դատական քննության ընթացքում բացառապես արարքի իրավաբանական որակման հարցեր բարձրացված և վիճարկված լինելու պայմաններում, մեղադրական ճառը համապատասխանում է ստանդարտին, որում ներկայացվում են գործով ձեռք բերված ապացույցներն ու փաստվում, որ մեղադրանքը հիմնավոր է, իսկ արարքի իրավաբանական որակման սխալի մասին պաշտպանության կողմի փաստարկները որևէ արձագանքի չեն արժանանում երբեմն այն դեպքում, երբ այդպիսի որակման հիմնավորումներն ուղիղ ներկայացված են նաև դատախազության կոլեգիայի որոշումներում:

Կոլեգիան անդրադարձավ նաև ի հայտ եկած՝ քրեադատավարական օրենքի կիրառության այնպիսի խնդիրների, որոնք պայմանավորված են իրավական կարգավորման բացերով կամ օրենսդրական սխալ մեկնաբանությամբ:

Դրանցից են փորձաքննություն նշանակելու՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-րդ հոդվածով նախատեսված կարգի ոչ լրիվ պահպանման դեպքերը: Ձևավորված քննչական պրակտիկայում, քրեական գործով փորձաքննություն նշանակելուց հետո նույն տեսակի փորձաքննությանը ենթակա այլ առարկաներ հայտնաբերելուց հետո, դրանք գրությամբ ուղարկվում են փորձագետին՝ հետազոտելու պահանջով և

առաջադրելով ինչպես փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ առաջադրված, այնպես էլ չառաջադրված հարցեր: Քննչական գործողության կատարման այս պրակտիկան կարող է վտանգել դրա արդյունքում ձեռք բերված ապացույցի թույլատրելիությունը, ուստի հարկավոր է սահմանել, որ փորձաքննություն նշանակելուց հետո նույն փորձաքննությանը ենթակա այլ առարկաներ հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է նշանակել նոր փորձաքննություն՝ փորձագետին տրամադրելով նոր հայտնաբերված հետազոտության ենթակա առարկաները, իսկ նախկինում փորձաքննության հանձնված առարկաների հետ դրանց համեմատության անհրաժեշտության դեպքում՝ որոշման մեջ հղում կատարելով նախկինում կայացված փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը՝ հարց առաջադրել դրանց նույնության կամ համեմատության այլ հնարավոր արդյունքի մասին:

Քրեական վարույթում անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ու երաշխավորման խնդիրներից մեկը տուժողի իրավահաջորդի՝ վարույթին մասնակցությունն է այն դեպքում, եթե տուժողը չունի մերձավոր ազգականներ՝ պայմանավորված նրանով, որ ՀՀ քր. դատ. օր.-ի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տուժողի իրավահաջորդ կարող է ճանաչվել միայն նրա մերձավոր ազգականը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ Վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներում բազմիցս արձանագրվել է, որ քրեական գործի քննության պատշաճության, դրա արդարացիության չափանիշներից մեկն է հանցագործությունից տուժած անձի իրավունքները ներկայացնող անձի լիարժեք մասնակցությունը քրեական դատավարությանը և նրա պահանջների քննարկումն ու լուծումը: Ուստի, այն դեպքում, երբ մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունից զրկված տուժողը չունի մերձավոր ազգականներ, ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 40-րդ կետի համաձայն նա պետք է ճանաչվի իրավահաջորդ և նրա շահերը ներկայացնի այդպիսի ցանկություն հայտնած նրա ազգականներից մեկը:

2017թ. դատարաններում քննված քրեական գործերով հանցագործությամբ պատճառված վնասն ընդհանուր առմամբ կազմել է 1.152.451.449 ՀՀ դրամ, որից 354.474.006 ՀՀ դրամը՝ պետությանը պատճառված, 797.977.443 ՀՀ դրամը՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց պատճառված վնաս (2016թ.՝ 2.979.386.421 ՀՀ դրամ, 2015թ. 1.176.748.690 ՀՀ դրամ):

Դատական քննությամբ ավարտված գործերով վերականգնվել է ընդամենը 282.672.354 ՀՀ դրամ (2016թ.՝ 1.540.888.469 ՀՀ դրամ), որից 29.141.585 ՀՀ դրամը՝ պետությանը, 253.530.769 ՀՀ դրամը՝ իրավաբանական անձանց և ֆիզիկական անձանց պատճառված վնասներից:

2017թ. դատարաններում քննված քրեական գործերից 1063-ով 1219 անձի նկատմամբ կիրառվել է դատական քննության արագացված կարգ, որը կազմում է քննված գործերի 44.4%-ը (2016թ. ընթացքում՝ 949 գործով, որը կազմում է քննված գործերի 40.5%-ը):

2017թ. դատական քննության ընթացքում 19 գործով 26 անձի նկատմամբ մեղադրողները որոշում են կայացրել առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին (2016թ.՝ 10 գործ, 16 անձ), որոնցից 15 գործով 22 անձի (2016թ.՝ 8 գործ, 8 անձ) նկատմամբ մեղադրողները որոշում են կայացրել մեղմացման առումով առաջադրված մեղադրանքը փոփոխելու մասին, իսկ խստացման առումով՝ 4 գործով 4 անձի նկատմամբ (2016թ.՝ 2 գործ, 8 անձ):

2017թ. դատապարտված 2509 անձից 974-ի նկատմամբ պատիժ է նշանակվել ազատազրկում, որը կազմում է դատապարտվածների 38.8%-ը: (2016թ.՝ 2464 անձից ազատազրկման է դատապարտվել 951-ը (38.5%), 2015թ.՝ 2256 անձից ազատազրկման է

դատապարտվել 851-ը (37.7%): Ինչպես 2016 թվականին, այնպես էլ 2017 թվականին որևէ անձ ցմահ ազատազրկման չի դատապարտվել:

Ընդհանուր դատապարտվածների մեջ կալանքի է դատապարտվել 65 անձ (2016թ.՝ 59): Այսինքն՝ կալանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտվածների մեջ կազմում է 2.5 %:

Տուգանքի է դատապարտվել 802 անձ (2016թ.՝ 841): Այսինքն՝ տուգանքի դատապարտված անձանց քանակը ընդհանուր դատապարտվածների մեջ կազմում է 31.9 %:

663 անձի նկատմամբ, որը կազմում է ընդհանուր դատապարտված անձանց 26.4%-ը, նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չի կիրառվել (2016թ.՝ 613 անձի կամ 24.8%-ի նկատմամբ): ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ դատապարտված 663 անձից 334-ի (50.3%) նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել մեղադրողների միջնորդության հիման վրա (2016թ.՝ 613 անձից 342-ի նկատմամբ (55.7%): Դատապարտված անձանցից, որոնց նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չի կիրառվել, 219-ը մեղադրվել է ոչ մեծ ծանրության, 254-ը՝ միջին ծանրության, 190-ը՝ ծանր հանցագործության կատարման մեջ:

2017թ. դատապարտված 13 անձի նկատմամբ կիրառվել է ՀՀ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածը (2016թ.՝ 9 անձի, 2015թ.՝ 4 անձի նկատմամբ) և նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ, որոնցից 6-ի նկատմամբ՝ դատարանների նախաձեռնությամբ, 7-ի նկատմամբ՝ մեղադրողի միջնորդությամբ:

Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողության իրականացման ոլորտ.

Հաշվետու ժամանակահատվածում ստուգվել է ՀՀ առողջապահության նախարարության հարկադիր բուժում իրականացնող հաստատություններում հարկադիր բուժման մեջ գտնվող անձանց հիմնական իրավունքների պահպանման վիճակը, որի արդյունքում հայտնաբերված խախտումներով նախապատրաստվել են նյութեր, ներկայացվել ծառայողական քննություն անցկացնելու վերաբերյալ միջնորդագրեր:

Ուսումնասիրվել և ամփոփվել է «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով սահմանված՝ ձերբակալված անձանց հիմնարար իրավունքների իրացման վիճակը, որի արդյունքում հայտնաբերվել է 107 խախտում և ՀՀ ոստիկանության մարզային վարչությունների պետերին ներկայացվել է ծառայողական քննություն անցկացնելու 10 միջնորդագիր, որոնց քննարկումն ընթացքում է:

2017թ. ընթացքում կատարվել է 1246 ստուգում և ուսումնասիրություն (2016թ.՝ 1547), որոնց արդյունքում հայտնաբերվել է 497 խախտում (2016թ՝ 192), պետական մարմիններին ուղարկվել է 19 հաղորդում (2016թ.՝ 39), ներկայացվել է ծառայողական քննություն անցկացնելու 54 միջնորդագիր (2016թ.՝ 61), որոնց հիման վրա վերանայվել է օրինականությանը հակասող 13 ակտ (2016թ՝ 22), իրականացվել է 24 ծառայողական քննություն, հարուցվել է 15 քրեական գործ (2016թ.՝ 28):

Հաշվետու ժամանակահատվածում դատախազները դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու, պայմանական վաղաժամկետ ազատումը վերացնելու, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու, ծանր հիվանդության կամ արտակարգ հանգամանքների հետևանքով պատժից ազատելու վերաբերյալ միջնորդությունների և դատարանի կողմից դատական որոշումներն ի կատար ածելու հետ կապված այլ հարցերի վերաբերյալ գործերով մասնակցել են 3000 դատական գործի քննության (2016թ.՝ 803):

Դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու որոշումների դեմ բերվել է 104 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 51), որոնցից 27-ը բավարարվել է (2016թ.՝ 19), 3-ով բերվել է վճռաբեկ բողոք, որոնց վերաբերյալ որոշումներ դեռ չեն կայացվել: Պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժով փոխարինելու գործերից 4-ով բերվել է վերաքննիչ բողոք (2016թ.՝ 3), հարկադիր բուժումը փոփոխելու կամ դադարեցնելու վերաբերյալ՝ 10 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 11), որոնցից 1-ը բավարարվել է (2016թ.՝ 4): Ծանր հիվանդության պատճառով պատիժը կրելուց ազատելու վերաբերյալ որոշումների դեմ բերվել է 1 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 7): Տուգանքը կամ դրա չվճարած մասը հանրային աշխատանքներով փոխարինելու վերաբերյալ բերվել է 27 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 2), որոնցից 2-ը բավարարվել է (2016թ.՝ 0), իսկ 1-ով բերվել է վճռաբեկ բողոք, որն ընթացքում է: Հանրային աշխատանքներն ազատազրկմամբ փոխարինելու վերաբերյալ բերվել է 1 վերաքննիչ բողոք (2016թ.՝ 1), որը բավարարվել է: Այլ գործերից 19-ով բերվել է վերաքննիչ բողոք (2016թ.՝ 28), որոնցից 4-ը բավարարվել է (2016թ.՝ 8):

2017 թվականի ապրիլ ամսից ՀՀ դատախազությունը մասնակցել է տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու 867 միջնորդության քննարկմանը, որի արդյունքում տուգանք պատժատեսակի դատապարտված դատապարտյալների կողմից կատարվել է մոտ 183մլն դրամ տուգանքի վճարում: ՀՀ դատախազության կողմից ՀՀ ԱՆ պրոբացիայի պետական ծառայությունում կատարվել է 132 ստուգում և ուսումնասիրություն (2016թ.՝ 169), ինչի արդյունքում հարուցվել է 4 քրեական գործ:

Պետական շահերի պաշտպանության ոլորտ.

ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության կողմից 2017թ. ընթացքում ՀՀ Նախագահի 28.10.2005թ.՝ «Պետության գույքային շահերի պաշտպանության ոլորտում արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների մասին» ՆՀ-189-Ն հրամանագրի, պետական մարմինների հաղորդումների, ՀՀ դատախազության աշխատանքի ծրագրերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների, ՀՀ վերահսկիչ պալատի հրապարակված հաշվետվությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիմքերով 62 ուսումնասիրություն է իրականացվել պետական կառավարման տարբեր ոլորտներում պետական շահերի պաշտպանության վիճակի վերաբերյալ (2016թ.՝ 59), որոնց արդյունքներով համապատասխան պետական մարմինների ղեկավարներին ներկայացվել է 62 հաղորդում:

Ուսումնասիրությունների ընթացքում վնասը կամովին վերականգնելու մասին կատարվել է 3 նախազգուշացում, կամովին վերականգնվել է 15.896.820 դրամ (2016թ.-ին նախազգուշացումներ չեն եղել):

2017թ. ընթացքում քաղաքացիական դատավարության կարգով դատարան է հարուցվել 18 հայց, որոնցից 9-ը՝ 336.918.045 դրամ գումարի բռնագանձման պահանջով, 6-ը՝ բռնագանձման ենթակա գումարները գանձելու համար ՀՀ քաղ. օր.-ի 200-րդ հոդվածի պահանջով համապատասխան բաժինն առանձնացնելու, դրանց վրա բռնագանձում տարածելու պահանջով, 3 հայց հարուցվել է նախորդ տարվա բավարարված հայցով պարտապան ֆիզիկական և իրավաբանական անձանց սնանկ ճանաչելու պահանջով, որոնցով բռնագանձման ենթակա ընդհանուր գումարը կազմել է 223.302.252 դրամ (2016թ.՝ 14 հայց, որոնցից ընդհանուր 66.084.746 դրամ գումարի բռնագանձման պահանջով 5 հայց):

Դատարանները քննել և դատական ակտեր են կայացրել 356.337.230 դրամի 14 հայցով, ներառյալ՝ նախորդ տարիներին հարուցված հայցերով, որոնցից բավարարվել է 336.808.403 դրամի 11 հայցադիմում, մերժվել է 11.781.200 դրամ հայցագնով 2 հայց, 1

հայցով վարույթը կարճվել է գումարը փաստացի վերականգնելու հիմքով, 36 հայցի դատաքննությունն ընթացքում է:

Նախորդ ժամանակահատվածում բավարարված հայցերով փաստացի վերականգնվել է 20 մլն դրամ:

2017թ. ընթացքում ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել 6 վերաքննիչ (3-ը բավարարվել է, 2-ը՝ մերժվել, 1-ը ընթացքում է) և 5 վճռաբեկ բողոք (1-ը բավարարվել է, 3-ը՝ մերժվել, 1-ը ընթացքում է):

Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերված մի շարք խախտումների կապակցությամբ հարուցվել է 13 քրեական գործ, որոնցով պետությանը պատճառված ընդհանուր վնասը կազմել է 567.205.483 դրամ, քրեական գործերի նախաքննության ընթացքում արդեն իսկ վերականգնվել է 14.436.694 դրամ (2016թ.՝ նախապատրաստվել է 51 նյութ, որոնցից 4-ով հարուցվել է քրեական գործ, 47-ն ուղարկվել է ըստ ենթակայության):

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է 479 ուսումնասիրություն (2016թ.՝ 333), հայտնաբերվել է 546 իրավախախտում (2016թ.՝ 327), պետությանը հասցրած վնասը կամովին վերականգնելու մասին նախազգուշացվել է 261 անձ (2016թ.՝ 105 նախազգուշացում), ուսումնասիրության արդյունքներով ներկայացվել է 176 հաղորդում (2016թ.՝ 177), ուսումնասիրությունների ընթացքում պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով նախապատրաստվել է 198 նյութ (2016թ.՝ 147), կամովին պետական բյուջե վերականգնվել է 149 մլն 266 հազ. դրամ (2016թ.՝ 12 մլն 682 հազ. դրամ), հարուցվել է 71 քրեական գործ (2016թ.՝ 60):

2017թ. ընթացքում դատախազության մարմինները, ներառյալ՝ վարչությունը, դատարան են հարուցել 81 հայց՝ 676 մլն 430 հազ. դրամի բռնագանձման պահանջով (2016թ.՝ 50 հայց՝ 4 մլրդ 730 մլն 921 հազ. դրամի բռնագանձման պահանջով): Դատարաններում քննվել է 55 հայց, որոնցից բավարարվել է 488 մլն 106 հազ. դրամ հայցապահանջով 44 հայց, մերժվել՝ 18 մլն 863 հազ. դրամ հայցապահանջով 8 հայց, կարճվել է 8 մլն 569 հազ. դրամ հայցապահանջով 3 հայց, ընթացքում է 5 մլրդ 833 մլն 092 հազ. դրամ հայցապահանջով 92 հայց:

Հաշվետու և նախորդ ժամանակահատվածում բավարարված հայցերով փաստացի վերականգնվել է 11 մլն 395 հազ. դրամ: Դատարաններում քննվել է 42 հայց, որոնցից բավարարվել է 187 մլն 646 հազ. դրամ հայցապահանջով 38 հայց, մերժվել է 3 մլն 174 հազ. դրամ հայցապահանջով 4 հայց:

Միջազգային-իրավական համագործակցության և իրավական ապահովման ոլորտ.

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության փաստաթղթաշրջանառությունն ավելացել է երկու անգամ (2017թ.՝ 13932, 2016թ.՝ 7353):

Հաշվետու տարում կրկնապատկվել է ՀՀ-ում հայտնաբերված՝ այլ երկրների կողմից հետախուզվող անձանց վերաբերյալ վարչությունում ստացված հաղորդումների թիվը (2017թ.՝ 140, 2016թ.՝ 79):

Վարչության աշխատանքի շնորհիվ օտարերկրյա, մասնավորապես՝ եվրոպական պետություններից, Իրանից, Վրաստանից, կատարված քննչական պահանջները ստացվում են համեմատաբար սեղմ ժամկետներում: Աճել է օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում հայտնաբերված ու կալանավորված անձանց թիվը, ներկայումս ՀՀ ԱՆ տարբեր քրեակատարողական հիմնարկներում պահվում է դատախազների միջնորդությամբ կալանավորված 15 հետախուզվող:

Կոլեգիան անդրադարձավ նաև վարչության կողմից վեր հանված գործնական մի շարք խնդիրների:

Ինչպես հայտնի է, ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորվում է ապաստան հայցելու իրավունքը, սակայն, որոշ դեպքերում, անազատության մեջ հայտնված անձանց կողմից փախստականի կարգավիճակ կամ ՀՀ-ում ապաստան ստանալու իրավունքից օգտվելը դիտվում է որպես նրանց նկատմամբ օրենսդրությամբ սահմանված որոշակի սահմանափակումներից խուսափելու միջոց:

Մասնավորապես, խոսքը օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց մասին է, որոնք փախստականների ու ապաստանի բնագավառը կարգավորող միջազգային պայմանագրերով և ՀՀ ներպետական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության՝ վերը նշված իրավունքի չարաշահմամբ նպատակ են հետապնդում խուսափելու կամ հետաձգելու իրենց նկատմամբ օրենքով նախատեսված կարգով որոշակի դատավարական և հանձնման բնագավառում գործող միջազգային պայմանագրերով նախատեսված մեխանիզմների իրագործումից:

Արդյունքում՝ մշակվել է մի շարք իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծերի փաթեթ, որի նպատակն է հստակեցնել և սահմանել օտարերկրյա պետությունների կողմից հետախուզվող և ՀՀ տարածքում ձերբակալված կամ կալանավորված անձանց ապաստան կամ փախստականի կարգավիճակ ստանալու հայցով դիմելու կարգն ու ժամկետները, այդ հայցերի քննարկման արագացված ժամկետները, կրճատել բացասական որոշումների բողոքարկման և դրանք ՀՀ դատարանների կողմից քննելու ժամկետները:

2018 թվականից վարչության կողմից ներդրվել է բոլոր տեսակի միջնորդություններն ըստ հանցատեսակի (թրաֆիքինգ, կոռուպցիա, փողերի լվացում, կիբեռհանցագործություններ, խոշտանգում, ապօրինի միգրացիա) հաշվառելու և վիճակագրություն վարելու ծրագիր:

Հաշվետու տարում ակտիվացել է իրավական ակտերի մշակման ոլորտում դատախազության գործունեությունը: Դատախազության գործունեությանը վերաբերող իրավական ակտերի ու իրավակիրառ պրակտիկայի վերլուծությունների հիման վրա քրեական գործերի քննության և դատախազական հսկողության ոլորտներում վեր հանված թերություններն օրենսդրորեն վերացնելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ներկայացվել է 10 օրենսդրական նախաձեռնություն (2016թ.՝ 3):

Ելնելով վերոգրյալից՝

ԿՈԼԵԳԻԱՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների և ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին՝

1) ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ, 34-104-րդ և 112-րդ հոդվածներով քննվող քրեական գործերով պարտադիր քննության առարկա դարձնել քննվող դեպքին նախորդած ժամանակահատվածում ենթադրյալ հանցագործություն կատարած անձի և տուժողի փոխհարաբերությունները, մասնավորապես, պարզել նրանց միջև նախկինում միջադեպեր եղել են, թե՝ ոչ, եթե այո, ապա դրանցով քննություն կատարվել է, թե՝ ոչ, եթե

այո, ապա ինչ արդյունքներով: Նման նախորդած դեպքերին իրավասու որևէ մարմնի կողմից պատշաճ չարձագանքելու յուրաքանչյուր փաստ դարձնել քննարկման, նաև իրավական գնահատականի առարկա:

2) Միջոցներ ձեռնարկել համակարգային կոռուպցիայի դեպքերը, կոռուպցիոն հանցանքի կատարման մեջ ներգրավված անձանց ողջ շրջանակը բացահայտելու ուղղությամբ: Այդ նպատակին հասնելու համար կոռուպցիոն հանցագործությունների դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի նախաքննության ընթացքում չսահմանափակվել միայն կոնկրետ փաստի քննությամբ, այլ պարտադիր քննության առարկա դարձնել նշված քրեական գործով անցնող պաշտոնատար անձի որոշակի ժամանակահատվածի գործունեությունը, ակտիվորեն կիրառել օրենքով նախատեսված բոլոր հնարավորությունները /օրինակ՝ հանցագործության բացահայտմանն աջակցող անձանց նկատմամբ կիրառել խրախուսական նորմեր, պաշտպանության միջոցներ/:

Այն դեպքերում, երբ նման քրեական գործերով անցնող անձը, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն, հանդիսանում է հայտարարագիր ներկայացնող, պարտադիր քննության առարկա դարձնել ապօրինի հարստացման հանցակազմը (ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդված):

3) Ապահովել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված սուտ մատնության վերաբերյալ քրեական գործ հարուցվի հանցագործության մասին հաղորդմամբ նշված հանցագործության դեպքը կամ դրան անձի մասնակցությունը բացառող քրեադատավարական որոշում կայացնելուց հետո, և սուտ մատնության վերաբերյալ քրեական գործը դատարան ուղարկվի բացառապես այն դեպքում, երբ հաղորդման մեջ նշված հանցագործության դեպքը կամ դրան հաղորդմամբ նշված անձի մասնակցությունը հերքվել է: Ընդ որում, նկատի ունենալ, որ հաղորդման մեջ նշված հանգամանքները հերքելու վերաբերյալ անձի բացատրությունը կամ ցուցմունքն ինքնին բավարար չէ նրա հայտնած սկզբնական տեղեկությունը հերքված դիտելու համար, և այդպիսի հետևությունը պետք է հիմնվի գործի լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննության արդյունքների վրա:

4) Բացառել փորձաքննություն նշանակելու մասին որոշումն ուղարկելուց հետո փորձագետին հասցեագրված գրությամբ փաստացի նոր հարցադրմամբ փորձաքննություն նշանակելու դեպքերը: Քրեական գործով փորձաքննություն նշանակելուց հետո նույն տեսակի փորձաքննության ենթակա այլ առարկաներ հայտնաբերելուց հետո նշանակել նոր փորձաքննություն՝ փորձագետին տրամադրելով նոր հայտնաբերված հետազոտության ենթակա առարկաները: Նախկինում փորձաքննության հանձնված առարկաների հետ դրանց համեմատության անհրաժեշտության դեպքում, որոշման մեջ հղում կատարել նախկինում կայացված փորձաքննություն նշանակելու մասին որոշմանը՝ հարց առաջադրելով դրանց նույնության կամ համեմատության այլ հնարավոր արդյունքի մասին:

5) ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ հանդիսացող՝ տուժողին ֆիզիկական ցավ պատճառած լինելու հանգամանքը հաստատելու համար չբավարարվել միայն վերջինիս պնդմամբ և պատշաճ քննությամբ պարզել այդ մասին վկայող օբյեկտիվ հանգամանքները:

6) Հափշտակությունների վերաբերյալ գործերով մեղադրանքի հիմնավորվածությունը «հիմնավոր կասկածից վեր» ապացուցողական չափանիշով գնահատելիս ապահովել, որ.

ա. հափշտակված գույքը չհայտնաբերվելու դեպքում, ելնելով դրա առանձնահատկություններից, միջոցներ ձեռնարկվեն դրա հատկանիշների վերաբերյալ փաստական տվյալներ ձեռք բերելու, այնուհետև նվազագույն և առավելագույն արժեքը

որոշելու ուղղությամբ՝ չբավարարվելով առարկայի արժեքի վերաբերյալ բացառապես տուժողի ցուցմունքներով,

բ. հափշտակության փորձի կամ զգալի չափ չկազմող արժեքով գույք հափշտակելու դեպքում հափշտակության առարկայի չափի կամ արժեքի վերաբերյալ հանցավորի դիտավորությունը գնահատելու համար ձեռք բերվեն անձի կոնկրետացված կամ չկոնկրետացված դիտավորության, դրա բովանդակության վերաբերյալ փաստական տվյալներ (օրինակ՝ հստակեցվի սնունդ հափշտակելու ցանկությամբ խանութից գողության փորձ կատարած անձի նպատակը՝ վերցվող սննդի տեսակի և քանակի վերաբերյալ, բնակարանից զգալի չափի չհասնող գույք հափշտակած անձի դիտավորությունը կոնկրետ տեսակի առարկաներ հափշտակելու վերաբերյալ, դեպքի վայրում հափշտակվածից բացի այլ առարկաների առկայության վերաբերյալ և այլն):

7) Ապահովել, որ այն դեպքերում, երբ մահացած կամ իր կամքն արտահայտելու ունակությունից զրկված տուժողը չունի մերձավոր ազգականներ, տուժողի իրավահաջորդ ճանաչվի այդպիսի ցանկություն հայտնած նրա այլ ազգականներից մեկը' վարույթի ընթացքում նրա շահերի պատշաճ պաշտպանությունն ապահովելու համար:

8) Ապահովել, որ այն դեպքերում, երբ անձը մեղադրվում է հանրային քրեական հետապնդման ենթակա հանցագործության մեջ, որը ներառում է մասնավոր հետապնդման ենթակա հանցագործություն, մինչդատական վարույթում ճշտվի այդ հանցագործությունը կատարելու համար մեղադրյալին քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ տուժողի դիրքորոշումը՝ դատաքննությամբ արարքը վերաորակվելու դեպքում, դրա կապակցությամբ տուժողի դիրքորոշումը ճշտված չլինելու պատճառով, վերջինիս քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերը բացառելու համար:

9) Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումներն ենթարկել հատուկ հսկողական ուսումնասիրության՝ նկատի ունենալով դրանց դատավարական նշանակությունը և դրանցով սկսվող կամ վերահաստատվող քրեական հետապնդման օրինականության նկատմամբ դատախազական հսկողության բացառիկությունը:

Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման ուսումնասիրությամբ ապահովել մեղադրանքի փաստական կողմի ստույգ, պարզ և հստակ ձևակերպումը, դրանում շարադրելով տվյալ հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշներն ու տվյալ դեպքում այդ հատկանիշների կոնկրետ դրսևորումները (ժամանակ, եղանակ, հետևանք և այլն):

10) Ապահովել, որ քրեական գործով ստացված մեղադրական եզրակացությունը պատշաճ ստուգման ենթարկվի քրեական գործով դատավարական ղեկավարում իրականացրած դատախազի կողմից՝ ապահովելու համար հաստատվող մեղադրական եզրակացության համապատասխանությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 270-271-րդ հոդվածների պահանջներին, այդ թվում՝ մեղադրանքի հիմքում դրվող ապացույցները, ի պաշտպանություն մեղադրյալի բերվող փաստարկները և դրանց ստուգման արդյունքում ձեռք բերված ապացույցները մեղադրական եզրակացության մեջ ներառելը, դրանց բովանդակության հստակ և ճշգրիտ շարադրանքը, մեղադրական եզրակացությանը կից հավելվածների և դրանցում ներառվող տվյալների ամբողջականությունն ու ճշտությունը:

11) Ապահովել մեղադրողի ակտիվ մասնակցությունը դատական քննության ընթացքում ապացույցների հետազոտմանը, ներառյալ՝ դրանց վերաբերելիությունը, թույլատրելիությունը և արժանահավատությունը կասկածի տակ դնող, անհիմն հայտարարությունների և միջնորդությունների վերաբերյալ փաստարկված

առարկություններ, դատական քննության փուլում ի հայտ եկած հանգամանքները ստուգելու նպատակով նոր ապացույցներ ձեռք բերելու վերաբերյալ հիմնավոր և պատճառաբանված միջնորդություններ ներկայացնելը:

Բացառել դատավարության մասնակիցների կողմից դատարան ներկայացրած միջնորդությունների դեմ դատախազների կողմից **վերացական** ու **չփաստարկված դիրքորոշումներ ներկայացնելը**:

12) Նկատի ունենալով գործի դատական քննության ընթացքն ու արդյունքները, դատավարության այլ մասնակիցների դատավարական դիրքորոշումները, նրանց կողմից վիճարկվող հանգամանքները, դրանց համապատասխան, մեղադրական ճառում անհրաժեշտ խորությամբ քննարկել մեղադրանքի հիմնավորվածությանն առնչվող, ինչպես նաև դատավճռով լուծման ենթակա այլ հանգամանքները (ապացույցների բավարարություն, արարքի իրավաբանական որակում, դատական ծախսեր, պատժի չափ և տեսակ) և ներկայացնել դրանց վերաբերյալ մեղադրողի դիրքորոշումը:

Բացառել մեղադրական եզրակացությունները որպես մեղադրական ճառ ներկայացնելու պրակտիկան:

13) Դատական պրակտիկայում միասնական պատժողական քաղաքականության ձևավորմանը նպաստելու և պատիժ նշանակելիս նշանակություն ունեցող նույնանման հանգամանքների առկայության պայմաններում, նույնանման փաստական հանգամանքներով հանցանք կատարած անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքը բացառելու նպատակով, մեղադրական ճառում միջնորդվող պատժի տեսակը և չափը որոշելիս դատական տեղեկատվական համակարգերի միջոցով ուսումնասիրել և հաշվի առնել ձևավորված ընդունելի դատական պրակտիկան՝ նկատի ունենալով կոնկրետ գործի անհատական առանձնահատկությունները:

14) Բացառել առաջին ատյանի դատարանի դատավճիռների դեմ բացառապես նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի մեջբերումներ պարունակող, չփաստարկված և չպատճառաբանված վերաքննիչ բողոքներ ներկայացնելը և, առաջին ատյանի դատարանի դատավճիռը օրինական ու հիմնավոր չհամարելու դեպքում, վերաբերելի իրավակարգավորումների և գործի հանգամանքների համադրված վերլուծությամբ, վերաքննիչ բողոքում անդրադառնալ դատավճռի յուրաքանչյուր փաստարկին՝ դրա չհիմնավորվածության կամ անօրինականության վերաբերյալ հիմնավոր հետևության հանգելու համար:

15) Դատարանների կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմի ակնհայտ և կոպիտ խախտումով կայացված յուրաքանչյուր դատական ակտի վերաբերյալ զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին՝ այն կայացրած դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու համար:

16) ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածին համապատասխան, անձի վերաբերյալ օտարերկրյա պետության դատավճիռը կարող է նշանակություն ունենալ նրան ՀՀ-ում քրեական պատասխանատվության ենթարկելու հարցը լուծելիս բացառապես այն դեպքում, եթե վերջինս օտարերկրյա պետությունում հանցանք է կատարել ՀՀ-ում հանցանք կատարելուց առաջ: Համապատասխանաբար, նկատի ունենալ, որ ՀՀ-ում կատարած հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետը օտարերկրյա պետության դատավճռով հաստատված՝ այդ պետությունում անձի կատարած հանցանքով չի ընդհատվում:

17) ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածով նախատեսված ակնհայտ կեղծ փաստաթուղթ օգտագործելու հանցակազմի առարկա դիտել ինչպես բովանդակային փոփոխություններով (ջնջում, հավելագրում, կետագծում և այլն) պաշտոնական

փաստաթղթերը, այնպես էլ նրանք, որոնք, թեև փոփոխության չեն ենթարկվել և տրվել են օրենքով սահմանված կարգով, սակայն օգտագործվել են այնպիսի կոնկրետ իրավահարաբերություններում, որոնց վերաբերելի չեն և օգտագործվել չեն կարող:

2. **ՀՀ գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման, կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչությունների, ՀՀ զինվորական կենտրոնական դատախազության քրեական հետապնդման ոլորտում կայազորների զինվորական դատախազությունների գործունեությունը վերահսկող բաժնի պետերին՝**

Դատական նիստերի արձանագրությունների ձայնային կրիչների, մեղադրական ճառերի պարբերական, ինչպես նաև ներկայացված յուրաքանչյուր վերաքննիչ բողոքի ուսումնասիրությամբ ապահովել դատարանում մեղադրանքի պաշտպանության բուն ընթացքի և դատական ակտերի բողոքարկման գործառույթի նկատմամբ վերահսկողությունը, վերը նշված պահանջների խախտումներ հայտնաբերելու դեպքում միջոցներ ձեռնարկել դրանք վերացնելու ուղղությամբ և թույլ տված խախտումների վերաբերյալ զեկուցագիր ներկայացնել ոլորտը համակարգող ՀՀ գլխավոր դատախազի տեղակալին:

3. **ՀՀ գլխավոր դատախազի տեղակալներին՝**

Սույն որոշման 2-րդ կետի խախտման վերաբերյալ ներկայացված զեկուցագրի հիման վրա մեղադրողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու առերևույթ հիմքեր հայտնաբերելու դեպքում զեկուցագիր ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

4. ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն և տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության պետին՝

Մեկամսյա ժամկետում նախապատրաստել կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ քննվող քրեական գործերով ՀՀ քրեական օրենսգրքի 310.1-րդ հոդվածով սահմանված հանցակազմի հատկանիշներ հայտնաբերելու ուղղությամբ իրականացվող քննչական և այլ դատավարական գործողությունների կատարման մասին մեթոդական ուղեցույց:

5. ՀՀ գլխավոր դատախազության ազգային անվտանգության մարմիններում քննվող և կիբեռհանցագործությունների գործերով վարչության պետին՝

Մինչև 2018թ. մայիսի 1-ը, միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա, առաջարկություններ ներկայացնել թմրամիջոցների ապօրինի շրջանառության և դրանց մաքսանենգության որակման գործնական հիմնախնդիրների վերաբերյալ:

6. ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության, կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունների պետերին՝

2018թ. հուլիսի 10-ից ստուգել 2018թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ դատախազության կոլեգիայի 04.08.2017թ. նիստի օրակարգի 1-ին հարցի որոշման կատարման վիճակը: Ստուգման արդյունքներով կազմված տեղեկանքը՝ ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչությունը՝ մարզերի, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների մասով, իսկ ՀՀ գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչությունը՝ ՀՀ գլխավոր դատախազության վարչությունների մասով, մինչև 2018թ. սեպտեմբերի 1-ը ներկայացնել ՀՀ գլխավոր դատախազին:

2. Լսեցին՝ Ս.Պարսամյանին

Երդման տեքստն ընթերցեցին և ստորագրեցին՝

1. Գոհար Արտակի Ադոնց	Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ,
2. Արմեն Արամի Կարապետյան	Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազության դատախազ,
3. Հովհաննես Կարենի Սաֆարյան	Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ,
4. Վանանդ Համլետի Ասատրյան	Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազ,
5. Վարդան Ռուբիկի Հարությունյան	Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազության դատախազ,
6. Ժորա Արմենի Չիչոյան	Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,
7. Արսեն Սուրենի Վարդանյան	Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ,
8. Մովսես Նորայրի Անտոնյան	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի դատախազության դատախազ,
9. Արտակ Աշոտի Մանուկյան	Արագածոտնի մարզի դատախազության դատախազ,
10. Ծովակ Արայիկի Մնացականյան	Արմավիրի մարզի դատախազության դատախազ,
11. Սամվել Ծերունի Հակոբյան	Լոռու մարզի դատախազության դատախազ,

12. Արմեն Խաչիկի Սապոնջյան	Սյունիքի մարզի դատախազության դատախազ,
13. Դավիթ Սարգսի Հարությունյան	Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ:

ԿՈԼԵԳԻԱՅԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ՝ **Ա.ԴԱՎԹՅԱՆ**

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ-ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ՝ **Ա.ՄԱՐՈՒԽՅԱՆ**